



ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԵՎ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«31» 05 2019 թվականի

N 53 *թ/թ*

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 17-Ի
N 273-Ն ՈՐՈՇՄԱՆ ԿԻՐԱՐԿՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ ԱՐՑԱԽԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԵՎ
ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 12-Ի N 40 Ն (Ա)
ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի ապրիլի 17-ի
N 273-Ն որոշման կիրարկումն ապահովելու նպատակով, Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 16-ի N 84 որոշմամբ
հաստատված թիվ 1 հավելվածի 14-րդ կետի 14-րդ ենթակետին և «Իրավական ակտերի
մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածին
համապատասխան.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

Հաստատել՝

1) պետական նպաստ նշանակելու, նշանակված պետական նպաստը փոխելու,
դադարեցնելու դիմումի ձևը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) պետական նպաստ նշանակելու, նշանակված պետական նպաստը փոխելու,
դադարեցնելու կարգադրության ձևը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) պետական նպաստ նշանակելու դիմումը մերժելու մասին ծանուցման ձևը՝ համաձայն N 3 հավելվածի.

4) 18 տարին չլրացած երեխային նպաստ նշանակելու համար լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու մասին ծանուցման ձևը՝ համաձայն N 4 հավելվածի.

5) պետական նպաստ նշանակելու, նշանակված պետական նպաստը փոխելու, դադարեցնելու դիմումների, պետական նպաստ նշանակելու, նշանակված պետական նպաստը փոխելու, դադարեցնելու կարգադրության, պետական նպաստ նշանակելու դիմումը մերժելու մասին, 18 տարին չլրացած երեխային նպաստ նշանակելու համար լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու մասին ծանուցումների հաշվառման մատյանի ձևը՝ համաձայն N 5 հավելվածի.

6) երեխայի ծննդյան միանվագ նպաստ տրամադրելու դիմումի ձևը՝ համաձայն N 6 հավելվածի.

7) երեխայի ծննդյան միանվագ նպաստ տրամադրելու դիմումների հաշվառման մատյանի ձևը՝ համաձայն N 7 հավելվածի.

8) չափահասության նպաստ տրամադրելու դիմումի ձևը՝ համաձայն N 8 հավելվածի.

9) չափահասության նպաստ տրամադրելու դիմումների հաշվառման մատյանի ձևը՝ համաձայն N 9 հավելվածի.

10) պետական նպաստի իրավունք ունեցող երեխաների կարգավիճակների կողերը՝ համաձայն N 10 հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարի 2018 թվականի հուլիսի 12-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունվարի 20-ի N 15-Ն որոշման կիրարկումն ապահովելու մասին» N 40 ն (ա) հրամանը:

Կատարողներ՝
ընտանիքի և երեխաների հիմնահարցերի վարչություն
հեռ.՝ 94 27 24
իրավաբանական բաժին
հեռ.՝ 94 48 53



Ս. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Հավելված N 1

Արցախի Հանրապետության
աշխատանքի, սոցիալական հարցերի
և վերաբնակեցման նախարարի
2019 թվականի Տպգրքի 31-ի
N 53 հրամանի

ՁեՎ

Արցախի Հանրապետության աշխատանքի,
սոցիալական հարցերի և վերաբնակեցման
նախարարության աշխատակազմի _____
(նշել անվանումը)
սոցիալական ծառայության տարածքային
գործակալության պետ _____
(անունը, հայրանունը, ազգանունը)

ԴԻՄՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ, ՆՇԱՆԱԿՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՏԸ ՓՈԽԵԼՈՒ,
ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ

Քաղաքացի _____
(անունը, հայրանունը, ազգանունը)
Հասցեն _____
Հեռախոսի համարը _____
Անձը հաստատող փաստաթղթի _____
(սերիան) (համարը)
Հանրային ծառայությունների համարանիշը կամ վավեր սոցիալական
ապահովության քարտի կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին
տեղեկանքի համարը _____

Խնդրում եմ պետական նպաստի իրավունք ունեցող երեխայի (երեխաների) կարգավիճակից ելնելով նշանակել, փոխել կամ դադարեցնել պետական նպաստ(ներ)ը. _____

(անհրաժեշտն ընդգծել)

Հ/Հ	Պետական նպաստի իրավունք ունեցող երեխաների կարգավիճակների կոդերը	Պետական նպաստի իրավունք ունեցող երեխաներ	Երեխաների թիվը	Ծանոթություն
1.		18 տարին չլրացած երեխաներ, այդ թվում՝		
1)	805	հաշմանդամ երեխաներ		
2)	800	միայնակ մոր երեխաներ		
3)	802	առանց ծնողական խնամքի մնացած երեխաներ		
4)	801	միակողմանի ծնողազուրկ երեխաներ		
5)	803	ալիմենտ ստացող երեխաներ		
6)	804	ժամկետային զինծառայողների երեխաներ		
7)	901	1-ին խմբի հաշմանդամների երեխաներ		
8)	902	2-րդ խմբի հաշմանդամների երեխաներ		
	904	ընտանիքում ծնված երեխաներ՝ անկախ չափահաս լինելու հանգամանքից՝		